



**<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ  
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում  
երկուշաբթի, 11 ապրիլի 2022թ., 14:05**

Մասնակցեցին՝

**Բաժնետերեր**

13 բաժնետեր նիստի բացման պահին

**Բանկի Խորհուրդ**

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Վարդան Աթայան

**Բանկի Վարչություն**

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Օվսաննա Առաքելյան

Գոհար Գրիգորյան

Գուրգեն Ղուկասյան

Դավիթ Պետրոսյան

Արթուր Ապերյան

**Հրավիրվածներ**

ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Մարիամ Ժամկոչյան

Հայաստանի Բանկերի Միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյան

ՖԻՆԱՐՄ ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան  
Բանկի Ներքին աուդիտի տնօրենի ժ/պ Արթուր Ղուկասով

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բաղդյանը:

**Աննա Բաղդյանը** ներկայացրեց, որ 11.04.2022թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 23.03.2022թ. դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել է Բանկի պաշտոնական կայքէջում, <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 25.03.2022թ-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 11.04.2022թ.՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 11.04.2022թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել են ձայնի իրավունք ունեցող 162,372,327 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 93.92%-ը: Զվորումն ապահովված է:

Բացելով նիստը և ողջունելով բոլոր բաժնետերերին և հյուրերին՝ **Ժողովի նախագահ Գագիկ Չաքարյանը** խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Զակոբյանին:

**Յարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևի սահմանում:**

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Զակոբյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ արժեթղթերի նկատմամբ պահանջարկը հավանական ներդրողների կողմից, Բանկի հորիզոնը որոշում է կայացրել իրականացնել 21,739,131 հատ՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ բաց բաժանորդագրության միջոցով 230 ՀՀ դրամ շուկայական արժեքով տեղաբաշխման իրականացմամբ:

Քվեարկության հետևյալ արդյունքներով Բաժնետերերի ժողովը սահմանեց <Յունիբանկ> ԲԲԸ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման՝ ձևը բաց բաժանորդագրության միջոցով՝

կողմ՝ 162,353,247 ձայն կամ մասնակիցների ձայների 99.98%  
դեմ՝ 0 ձայն  
ձեռնպահ՝ 19,080 ձայն կամ մասնակիցների ձայների 0.01%  
անվավեր՝ 0 ձայն

**Յարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմի և լիազորությունների ժամկետի հաստատում:**

Ժողովի քարտուղար Աննա Բադոյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով 25.06.2022թ-ին Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետի ավարտը, Բանկի հորիզոնի կողմից առաջարկվում է հաստատել Հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝ լիազորությունների ժամկետը սահմանելով 3 տարի.

Աննա Բադոյան (նախագահ)  
Նուրիջան Կիրակոսյան  
Հայկ Նալբանդյան

Բաժնետերերի ժողովը հաստատեց Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմը և լիազորությունների ժամկետը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 162,372,327 ձայն կամ մասնակիցների ձայների 100%  
դեմ՝ 0 ձայն  
ձեռնպահ՝ 0 ձայն  
անվավեր՝ 0 ձայն

Աննա Բադոյանը հայտարարեց, որ ժողովի օրակարգը սպառված է:

Ժողովի նախագահ Գագիկ Չաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և փակեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:20-ին:

  
Գագիկ Չաքարյան  
Նախագահ

  
Աննա Բադոյան  
Քարտուղար